ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Արարատի մարզի «Գետազատի Նորայր Մանասերյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի <<Հայոց եկեղեցու պատմություն>> առարկայի /7 ժամ /, <<Տեխնոլոգիա>> առարկայի /8 ժամ / , <<Ֆիզիկա>> առարկայի /13 ժամ / , <<Ֆիզկուլտուրա>> առարկայի /11 ժամ /, <<Պատմություն>> առարկայի /6 ժամ / ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթը անցկացվում է 2 փուլով՝ թեստավորման և հարցազրույցի միջոցով: Թեստավորման փուլը անցկացվում է ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակված հարցաշարի:Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակկցի հետ հարցազրույցը անցկացնում է առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել.

1. Դիմում (Ձև 1),
2. Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
3. Անձը հաստատող փաստաթուղթ,
4. <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
5. Ինքնակենսագրություն(Ձև 5),
6. Որակավորման տարակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթուղթ,
7. Մեկ լուսանկար՝ 3×4 չափի,
8. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
9. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:
10. Հրապարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկը ամբողջական չէ, կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք: Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից՝**օգոստոսի 31-ից մինչև սեպտեմբերի 13-ը ներառյալ**. ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա **սեպտեմբերի 15-ին՝ ժամը 14:00-ին,**Արարատի մարզի Գետազատի Նորայր Մանասերյանի անվան միջնակարգ դպրոցում, հասցեն՝ գ. Գետազատ, Բաղրամյան 1/1:

Տեղեկությունների համար զանգահարել՝ 093-641001 հեռախոսահամարով: